ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 15

վիճակագրության պետական խորհրդի նիստի

--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------

13.11.2015թ. ժ.11: 00

***Մասնակցում էին՝*** *Ս.Մնացականյան (խորհրդի նախագահ), Գ.Անանյան, Գ.Գևորգյան, Ա.Սաֆյան, Յու.Պողոսյան, Ս.Դավթյան, Լ.Պետրոսյան (խորհրդի անդամներ), Հ. Գրիգորյան (խորհրդի քարտուղար)*

***Հրավիրված էին՝*** *Լ.Միրզոյան (ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ), Ա. Հայրապետյան (աշխատակազմի ղեկավար), Վ.Սարոյան (իրավաբանական բաժնի պետ), Վ. Առնշատյան (բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի պետ), Դ.Մարտիրոսովա (տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ), Ն. Բաղդասարյան (սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ), Հ. Տիտիզյան (ֆինանսների վիճակագրության բաժնի պետ), Ա. Հարությունյան (առևտրի և այլ ծառայությունների վիճակագրության բաժնի պետ), Լ. Քալանթարյան (աշխատանքի վիճակագրության բաժնի պետ), Ջ.Ավոյան (աշխատանքի վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ), Ա.Անանյան (արդյունաբերության վիճակագրության բաժնի պետ), Ս.Ջեյնալյան (աշխատանքի վիճակագրության բաժնի առաջին կարգի մասնագետ), Հ. Ջանլաթյան (վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ):*

**Օրակարգի նախագծում տասը հարց.**

1. «Կազմակերպության ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ» (Ձև 3-Ֆ (տարեկան)) պետական վիճակագրական հաշվետվության ձևն և լրացման հրահանգը հաստատելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Հ.Տիտիզյան/*

2. «2015 թվականի երրորդ եռամսյակում ՀՀ ԱՎԾ որակի կառավարման աշխատանքային խմբի կողմից կատարված աշխատանքների հաշվետվության մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Վ.Առնշատյան/*

3. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2008 թվականին տնային տնտեսություններում իրականացված «Աշխատուժը և ոչ ֆորմալ զբաղվածությունը Հայաստանում» միանվագ հետազոտության արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազան Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Լ.Քալանթարյան/*

4. «Աշխատողների թվաքանակի և աշխատավարձի մասին» Ձև թիվ 1-Ա (ամսական), «Աշխատողների թվաքանակի և աշխատավարձի մասին» Ձև թիվ 1-Ա (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերը և դրանց լրացման հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2013 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 30-Ն, 31-Ն, 32-Ն և 33-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին», և «Առևտրային կազմակերպություններում աշխատողների թվաքանակի և աշխատավարձի մասին» հետազոտության հարցաթերթը և լրացման հրահանգը հաստատելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Լ.Քալանթարյան/*

5. «2016 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում իրականացվելիք տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության հարցաթերթը և օրագիրը հաստատելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Դ.Մարտիրոսովա/*

6. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության կողմից ներկայացված «Տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվական ծառայությունների մասին» Ձև 1-ՏՏ (ամսական) վարչական վիճակագրական հաշվետվության ձևին հավանություն տալու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Ա.Հարությունյան/*

7. «Հաշվետվություն էներգակիրների արտադրության, սպառման և պահուստների մասին» Ձև թիվ 1–էներգետիկա (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման ցուցումը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ 43-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Ա.Անանյան/*

8. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի հուլիսի 26-ի թիվ 110-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Ա.Հայրապետյան/*

9. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

9.1. Հաղորդում՝ Ավստրիայի Հանրապետության Վիեննա քաղաքում 2015թ. սեպտեմբերի 14-ից 25-ը «Վճարային հաշվեկշռի և միջազգային ներդրումային դիրքի ձեռնարկի» 6-րդ խմբագրության հիմնական առանձնահատկություններին, դրանց ներդրման հետ կապված խնդիրներին, ինչպես նաև ԱՄՀ համապատասխան անձնակազմի հետ մասնագիտական քննարկումներին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Հ. Ջանլաթյան/*

9.2. Հաղորդում՝ Բելառուսի Հանրապետության Մինսկ քաղաքում 2015թ. սեպտեմբերի 15-ից 16-ը Անկախ պետությունների համագործակցության միջպետական վիճակագրական կոմիտեի (ԱՊՀ) կողմից կազմակերպված «ԱՊՀ երիտասարդությունը. վիճակագրական պատկեր» ժողովածուի թողարկումը և գենդերային վիճակագրության զարգացումը» թեմայով աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցողներ՝ Ն. Բաղդասարյան, Լ. Քալանթարյան/*

9.3. Հաղորդում՝ Բելգիայի Թագավորության Բրյուսել քաղաքում 2015թ. սեպտեմբերի 21-ից 23-ը Եվրոստատի, ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի /ՄԱԿ-ի ԵՏՀ, UNECE/ վիճակագրության բաժնի և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության /OECD/ հետ համատեղ կազմակերպված Բիզնես ռեգիստրների գծով աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Ա.Հայրապետյան/*

9.4. Հաղորդում՝ Վրաստանի Թբիլիսի քաղաքում 2015թ. հոկտեմբերի 5-ից 6-ը Եվրահանձնաժողովի կողմից կազմակերպված Արևելյան համագործակցության վիճակագրական Պլատֆորմ-2-ի ներքո իրականացվող «Աշխատանքի շուկայի վիճակագրությունը» ծրագրի շրջանակում կայացած «Տնտեսական ինտեգրումը և մոտարկումը ԵՄ քաղաքականությանը» խորագրով խորհրդակցությանը մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցողներ՝ Լ. Քալանթարյան, Զ. Ավոյան, Ս. Զեյնալյան/*

10. Այլ հարցեր

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

/Քվեարկության արդյունքները-կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

**Լսեցին՝**

1. «Կազմակերպության ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ» (Ձև 3-Ֆ (տարեկան)) պետական վիճակագրական հաշվետվության ձևն և լրացման հրահանգը հաստատելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Հ.Տիտիզյան/*

**Որոշեցին՝**

հաստատել «Կազմակերպության ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ» (Ձև 3-Ֆ (տարեկան)) պետական վիճակագրական հաշվետվության ձևն և լրացման հրահանգը համաձայն իրենց հավելվածների:

*/Նորմատիվ/*

*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

**Լսեցին՝**

2. «2015 թվականի երրորդ եռամսյակում ՀՀ ԱՎԾ որակի կառավարման աշխատանքային խմբի կողմից կատարված աշխատանքների հաշվետվության մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Վ.Արնաշայան/*

**Որոշեցին՝**

«2015 թվականի երրորդ եռամսյակում ՀՀ ԱՎԾ որակի կառավարման աշխատանքային խմբի կողմից կատարված աշխատանքների հաշվետվությունն ընդունել ի գիտություն:

*/Անհատական/*

*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

**Լսեցին՝**

3. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2008 թվականին տնային տնտեսություններում իրականացված «Աշխատուժը և ոչ ֆորմալ զբաղվածությունը Հայաստանում» միանվագ հետազոտության արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազան Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Լ.Քալանթարյան/*

**Որոշեցին՝**

թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի աշխատանքի վիճակագրության բաժնին՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2008 թվականին տնային տնտեսություններում իրականացված «Աշխատուժը և ոչ ֆորմալ զբաղվածությունը Հայաստանում» միանվագ հետազոտության արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազան զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

*/Անհատական/*

*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

**Լսեցին՝**

4. «Աշխատողների թվաքանակի և աշխատավարձի մասին» Ձև թիվ 1-Ա (ամսական), «Աշխատողների թվաքանակի և աշխատավարձի մասին» Ձև թիվ 1-Ա (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերը և դրանց լրացման հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2013 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 30-Ն, 31-Ն, 32-Ն և 33-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին», և «Առևտրային կազմակերպություններում աշխատողների թվաքանակի և աշխատավարձի մասին» հետազոտության հարցաթերթը և լրացման հրահանգը հաստատելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Լ.Քալանթարյան/*

**Որոշեցին՝**

հաստատել «Աշխատողների թվաքանակի և աշխատավարձի մասին» Ձև թիվ 1-Ա (ամսական), «Աշխատողների թվաքանակի և աշխատավարձի մասին» Ձև թիվ 1-Ա (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերը և դրանց լրացման հրահանգը և «Առևտրային կազմակերպություններում աշխատողների թվաքանակի և աշխատավարձի մասին» հետազոտության հարցաթերթն ու լրացման հրահանգը, իսկ Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2013 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 30-Ն, 31-Ն, 32-Ն և 33-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչել:

*/Նորմատիվ/*

*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

**Լսեցին՝**

5. «2016 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում իրականացվելիք տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության հարցաթերթը և օրագիրը հաստատելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Դ.Մարտիրոսովա/*

**Որոշեցին՝**

հաստատել 2016 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում իրականացվելիք տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության հարցաթերթը և օրագիրը՝ համաձայն հավելվածի:

*/Անհատական/*

*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

**Լսեցին՝**

6. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության կողմից ներկայացված «Տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվական ծառայությունների մասին» Ձև 1-ՏՏ (ամսական) վարչական վիճակագրական հաշվետվության ձևին հավանություն տալու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Ա.Հարությունյան/*

**Որոշեցին՝**

հավանություն տալ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության «Տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվական ծառայությունների մասին» Ձև 1-ՏՏ (ամսական) վարչական վիճակագրական հաշվետվության ձևին և լրացման հրահանգին՝ համաձայն հավելված 1-ի և հավելված 2-ի:

*/Անհատական/*

*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

**Լսեցին՝**

7. «Հաշվետվություն էներգակիրների արտադրության, սպառման և պահուստների մասին» Ձև թիվ 1–էներգետիկա (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման ցուցումը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ 43-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Ա.Անանյան/*

**Որոշեցին՝**

Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ 43-Ն որոշմամբ հաստատված հավելված 1-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

*/Նորմատիվ/*

*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

**Լսեցին՝**

8. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի հուլիսի 26-ի թիվ 110-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Ա.Հայրապետյան/*

**Որոշեցին՝**

հաստատել «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի հուլիսի 26-ի թիվ 110-Ն որոշման մեջ առաջարկվող փոփոխությունները:

*/Նորմատիվ/*

*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

**Լսեցին՝**

9. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

9.1. Հաղորդում՝ Ավստրիայի Հանրապետության Վիեննա քաղաքում 2015թ. սեպտեմբերի 14-ից 25-ը «Վճարային հաշվեկշռի և միջազգային ներդրումային դիրքի ձեռնարկի» 6-րդ խմբագրության հիմնական առանձնահատկություններին, դրանց ներդրման հետ կապված խնդիրներին, ինչպես նաև ԱՄՀ համապատասխան անձնակազմի հետ մասնագիտական քննարկումներին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Հ. Զանոյան/*

9.2. Հաղորդում՝ Բելառուսի Հանրապետության Մինսկ քաղաքում 2015թ. սեպտեմբերի 15-ից 16-ը Անկախ պետությունների համագործակցության միջպետական վիճակագրական կոմիտեի (ԱՊՀ) կողմից կազմակերպված «ԱՊՀ երիտասարդություն. վիճակագրական պատկեր» ժողովածուի թողարկումը և գենդերային վիճակագրության զարգացումը» թեմայով աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցողներ՝ Ն. Բաղդասարյան, Լ. Քալանթարյան/*

9.3. Հաղորդում՝ Բելգիայի Թագավորության Բրյուսել քաղաքում 2015թ. սեպտեմբերի 21-ից 23-ը Եվրոստատի, ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի /ՄԱԿ-ի ԵՏՀ, UNECE/ վիճակագրության բաժնի և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության /OECD/ հետ համատեղ կազմակերպված Բիզնես ռեգիստրների գծով աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Ա.Հայրապետյան/*

9.4. Հաղորդում՝ Վրաստանի Թբիլիսի քաղաքում 2015թ. հոկտեմբերի 5-ից 6-ը Եվրահանձնաժողովի կողմից կազմակերպված Արևելյան համագործակցության վիճակագրական Պլատֆորմ-2-ի ներքո իրականացվող «Աշխատանքի շուկայի վիճակագրությունը» ծրագրի շրջանակում կայացած «Տնտեսական ինտեգրումը և մոտարկումը ԵՄ քաղաքականության» խորագրով խորհրդակցությանը մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցողներ՝ Լ. Քալանթարյան, Ձ. Ավոյան, Ս. Զեյնալյան/*

**Որոշեցին՝**

արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունել ի գիտություն

*/Անհատական/*

*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ